

ճիշտ ու ճիշտ այն միջոցն է որ գործադրուեցաւ Ստա-  
նայի մէջ : Երկու շարժումներու նմանութիւնը աչքա-  
ռու է :

Յարգելի ընկերս Եռսուֆ Քէմալ պէյ կը գրէ .  
«... Թէպէտ հրացան նետուած վայրերու մօտականե-  
րը կարգ մը հայոց տուններ կային...» : Ստով կարծես  
բոլորովին չի մերժեր այն կարելիութիւնը թէ՛ հրացա-  
նածգութիւնը հայերու կողմէ կատարուած ըլլար :  
Սակայն , իմ հասկացողութեամբս , այս մասին ամենա-  
փոքր կասկած մը ներելի չէ , նկատելով որ իրենց սե-  
փական թաղէն դուրս բնակող բոլոր հայերը Սպարի 4ին  
սպանուած էին , այնպէս որ 12ին — թուական երկրորդ  
կոտորածին — ալդ չըջանակներու մէջ ոչ մէկ հայ մը  
նացած էր : Ուստի , զինուորներու վրայ կատարուած  
հրացանածգութիւնը լսւամի մը կողմէ միայն կրնար  
տեղի ունենալ :

Անկարելի է բաւական ուժգին քայտարութիւններ  
քանել՝ նկարագրելու համար սարսափը և վայրագու-  
թիւնը այս երկրորդ կոտորածին՝ որ տեսած է երկու օր :

Այս սպանդի միջոցին էր որ ողջ ողջ այրած են  
հիւանդները և այն վիրաւորները՝ որոնք հասած էին  
չըջակայ ազարակներէն և գիւղերէն և կամ կը զրա-  
նըէին դպրոցական շէնքին մէջ :

Ճէվատ պէյ իր անդեկազրին մէջ աւելորդ համա-  
բած է խօսիլ այն սարսափելի մահացումին մասին՝ ու-  
րուն ալդ դժբաղդները ենթարկուեցան բոցերուն մէջ .  
բառ մը չըսեր փորերնին պատուած յդի կիներու , խող-  
խողուած մանուկներու և ուրիշ հազար տեսակի անա-  
նուն վայրագութիւններուն վրայով : Բայց չէ մոռցած  
խնամով նօթագրելու որ Հայոց թաղին հրդեհումին  
միջոցին մեծ քանակութեամբ ումերբ և ուժանակներ  
պայթած են : Այս գրպարտութեան լաւագոյն հերքումը